




ԱՐԴՅԱԿԱՆ



**Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԵԼԻ ԶԱՎՈՅՈՎԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ**

(18 փետրվարի 2001 թ.)

«Յանուն Նօր և Որդույ և Նոգույն Սրբոյ ամեն»:

Փառք եմ տախս առ Բարձրյալի Աստված, որ տարիներ հետո նորից հնարավորությունը ունեմ Միածնակած այս Սուրբ Խորանից առ Աստված իմ ձայնս բարձրացնելու, աղոթքս առաքելու ձեզ համար, իմ սիրելի հայ ժողովուրդ, հարկապես այս ծանր և դժվար օրերին։ Այն ժամանակ, երբ վերջինն էր իմ Պատարազը այսդեռ, երկրում հայոց և ազգություններ այս ցավակի վիճակին չեղ մարնված։ Այն ժամանակ Լուսավորչ Սուրբ Գաղին բազմած ունեինք Ամենայն Հայոց Վազգեն Կաթողիկոսը, իսկ այսօր այն զբաղեցնում է այն անձը, որը եղավ մեզ սերմնակից, և որին դրված է կոչումը ձեզ այսօրվա Եզիդակոսի հոգու զերությունից առաջնորդելու, իբրև մերօրյա նոր Մովսես, և այդ անունն է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Ոչինչ պիտի կարողանան նա անել, եթե մեզանից ամեն մեկը չգինակցի նրան, որպեսզի դժվարության, նեղության այս պատերազմին կարողանանք մենք հաղթել այնպես, ինչպես երբ Մովսեսի զինակիցները նրա ձեռքերը բարձր էին պահում, - ասում է Աստվածաշունչը, - հաղթում էր իրեա ժողովուրդը, երբ այդ ձեռքերը թուլանում էին, պարփառմ էր իրեա ժողովուրդը։

Այսօր կարծեք պարզվում ենք ոչ թե ռազմադաշտում, այլ հոգու պարերազմի դաշտում: Երբ այս զաղակարները փակավին երեկ իմ մեջ ուզում էի լուծման փողերի վերածել, Ս. Գրիգ Եշերից հանդիպեցի սաղմոսերգուի հերկեալ վողերին. «Ասրուած մերժեցեր և աւերեցեր զմեց, շարժեցեր զերկիր և խոռվեցեր զսա». Տեր Ասրուած, մերժեցիր մեզ, շարժեցիր մեր երկիրը և խոռվեցրիր բոլորին: Այսօր շարժված է մեր երկիրը, խոռված եք բոլորը, որովհետք այն, ինչ սկսեցինք երեկ խանդավառությամբ, ովարությամբ, ինչ-որ դեղ հասցրեց մեզ հիասթավության: Ինչո՞ւ: Ահա այս «ինչու»-ի պարբառն է, որ կուգեմ այս պահին ձեզ հետ միասին գիմնել: Ձերևս այս բոլորի պարբառը այն էր, որ փասնամյակներ առաջ սկսած դրամարանված գործերի արդյունքն է, որ այսօր քաղում ենք, երբ փասնամյակներ շարունակ հայ ժողովուրդը իր իսկ ձեռքով քանդում էր իր իսկ աղոթքի սրբություն սրբոց գները, երբ կործանվում էին ոչ թե շենքերը իրեն կառույցներ, այլ հոգու կառույցն էր քանդվում: Եվ երբ երեկ Երևանում ման էի գալիս, գների խավարը սարսեցնում էր Եղիշյուն. այսօրվա խավարը գալիս է երեկվա ձեր սկսած հոգու խավարից, երբ մենք սկսեցինք մերժել ինքներս մեզ, ինքներս մեր Եղիշյուն, մեր հավագրքը, հայոց Ասգծուն և հայոց Քրիստոսին, այն Քրիստոսին, որը 1700 փարիներ առաջ իշավ այսքեղ՝ կնքելու մեր հավագրքը, դրոշմելու մեր քրիստոնյա լինելու վկայագիրը: Այդ անում էր Նա, Ով խոսդացել էր աշխարհ գալ երկրորդ անգամ գալ դարեկու մարդկանց: Նա իր ուխտը շնախիքց մեզ համար, մեր սիրույն համար, այլ եկավ մեր քրիստոնեությունը առավել ևս զորացնելու, և ահա այդ Եղիշյունն էր, որ հեռացավ մեզանից, այդ Եղիշյունից հեռացած փասնամյակներ շարունակ կերպեցինք այն իսկ դիմագիծը, որից ինքներս իսկ այսօր փառապում ենք: Ով է այսօր մեզ այս վիճակին հասցեկ: Կային փարիներ, երբ մեղադրում էինք այս կամ այն ազգերին, ո՞ւմ ենք ուզում այսօր մեղադրել. նրանց, որոնք ծնվել են մեր մեջ, ուզում ենք մեղադրել այն մայրերին, որոնք երեկ փակավին ձեր մեջ էին և ոչ քրիստոնեական ոգով դասպիհարակելով իրենց զավակներին՝ հասցեցին մեր Եկեղեցին, ազգը այս խեղճ և կրակ վիճակին: Երբ նայում ես մարդկանց դեմքին, հոյսի փոխարեն հուսախարություն է, երբ մարդկանց դեմքերին ես նայում, հավագրքի փոխարեն հուսալցություն է, երբ հարցնում ես՝ Ի՞նչ պիտի անես, նա չի միածնում վաղվա իր երկիր, իր հայրենիքը կառուցելու մասին, այլ մրածում է իր հայրենիքից փախչելու մասին:

Ինչո՞ւ: Կարդանք սաղմոսերգուի խոսքերը. «Ասրուածոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի նմանէ է ինձ փրկութիւն». միայն Ասրուածո հնազանդ եղիր, ով իմ անձ, և փրկությունը նրանից պեսք է լին: Արդյո՞ք եղանք հնազանդ: Ինչ է նշանակում այսօր Ասրուածո հնազանդ լինելը: Արդյո՞ք քրիստոնեություն՝ մոմավառություն է նշանակում, արդյո՞ք քրիստոնեություն՝ պարզապես մարդա անել է նշանակում, և դրանից հետո ուրեմն, իմել և զվարձանալ, թէ՛ քրիստոնեություն՝ նշանակում է առանց գիրակցելու խաչակը երեսը: Ոչ: Քրիստոնեություն՝ նշանակում է ապրել Քրիստոսով: Քրիստոսու ասում էր. Վերցրու իմ խաջը և արի իմ եփեկից: Ո՞ր է արդյոք այդ խաջը, ո՞ր է Քրիստոսի այդ խաջը, որ պեսք է մեզ առաջնորդի դեսի փրկություն, դեսի լույ:

Չկար այդ խաչը երեկ, և այսօր մարդնված ենք խավարի: Չի լինի այդ խաչը վաղը, և խավարը կմնա մեր հոգու հավիտենականության տանջանքը այնպես, ինչպիսին է այսօր: Այն նաև մեր ֆիզիկականի տանջանքը է: Քրիստոնեությունը մեզ համար ոչ միայն պեսք է խոսք լինի, ոչ միայն գոռնակագրություններ նշելու առիթ, ինչպես ոմանք զարմանալիորեն հայրարարում են նույնիսկ պաշտոնական տեղերում, այլ քրիստոնեությունը մեզ համար պիտի լինի կյանքի համոզում, պիտի լինի ընթացք, պիտի լինի ճանապարհ. «Ես եմ ճանապարհը, ճշմարդությունը և կյանքը»: Եթե այդ ճանապարհով ընթանաք դուք, ընթանաք մենք, իբրև հավաքականություն, որի անունն է քրիստոնյա հայ ժողովուրդ, անհմասպ է խաչակնքնելը, անհմասպ, որովհետք խաչի խորհուրդը մեզ պիտի չփրկի, անհմասպ է մոն վառելը, որովհետք Քրիստոսի լույսը մեզ պիտի չառաջնորդի դեպի այդ փրկությունը: Քրիստոնեությունը գիրակցություն է, գիրակցված կյանքի մի ուղի, որի մեջ ոչ թե խոսքն է բախսորոշը, այլ գործը՝ ասում էր Պողոս առաքյալը: Ահա, սիրելիներ. այս զգացումներն են իմ մեջ, որ ոգում եմ աղոթք առաքել առ Աստված, աղոթք, որի մեջ ամենաշատը աղերսանք է, իմորանք, որովհետք սաղմոսերգուն թերևս նոյն այդ զգացումներն ուներ իր մեջ, երբ գետնում էր իր իսկ ազգի ճգնաժամային պահը և աղոթում էր Ասպծո՞ ասելով. «Աստված, դու ես իմ Աստվածը, փրկիչը, ապավենը, որովհետք առանց Ձեզ պառվել պիտի դժվարանա և բարդանա մեր վիճակը»:

Ինչ կարող ես ասել դու, ով իմ ազգ հայոց, այս ծանր պահին, եթե ոչ այս նոյն խոսքերը սաղմոսերգուի. «Աստված, դու ես իմ Աստվածս, որովհետք ոչ մեկ ենուվայի վկա, ոչ մեկ մորմն, ոչ մեկ հոգեկալսկական կամ արևմուղքից եկած սուրբ մարդարեական չակերպյալ աստվածներ պիտի չկարենան քեզ, ով ազգ հայոց, հեռացնել իր իսկ ճշմարդի արարիչ Աստծուց: Այս Աստծու մասին եր, այն Աստծու, որ քեզ ենք ուսկը արեց Նոյին ուղղյալ և նրա սերմողին այսպես Արարադի լոռան և Արարափի փեշերին, ուխտ արեց՝ ասելով. «Դու ես իմ ազգն ընդունած»: - Ո՞ր է այսօր այդ ազգն ընդունած, անորոշության մեջ մարմնված այնպես, ինչպես երբ Մովսես բարձրացակ գասմաբանյան թերեւու, երեաներն էին մարմնվել անորոշության՝ սկսել էին հորթ պաշտել: Դիմա մենք փող ենք պաշտում, հիմա մենք ուրիշ աստվածներ ենք պաշտում, առանց ապավիշնելու մեր Աստծուն, հայոց արարիչ Աստծուն, որը պիտի լինի մեր միակ փրկությունը: Փրկությունը հայոց իր իսկ ճշմարդի հավաքքի և Եկեղեցու մեջ է: Պարահական չէ, որ Վահան Թերեյանը պիտի ասեր. «Եկեղեցին հայկական ծննդապայրն է հոգվոյս»: Բավական է եթես դարձնենք այդ Եկեղեցուց, այլև մենք պիտի հեռանանք մեր ծննդապայրից, մեր օրրանից և դժրախարաբար, եթե շաբերը հեռանում են, ապա նրանք նախ հեռացել են իրենց հոգու օրրանից:

Ահա, սիրելիներ, այս մրածումների մեջ ձեզ կոչ եմ անում, այն պահին, երբ մեր դպրաց դասը առ Աստված իր աղոթքը պիտի ուղղի և «Տեր, ողորմյա» պիտի խնորի Աստծուց, բոլորս ծնկաչը ողորմություն խնորենք, առաջինը, որ Աստված մեզ կարողանա հզորացնել մեր հավաքքի մեջ, հասդատուն պահել մեր հավաքքի մեջ, ու

իրապես զիրակցներ, թե Ասդրած է մեր Փրկիչը. Ասդրած է մեր ապավենը: Բավական է, որ ապավիճներ մեր հայոց Արքայի Ասրծուն, և վաղը փրկությունը ոչ խոսքով, այլ գործով պիտի իրականանա ոչ թե մի քանի անձերի համար, այլ ամբողջ ձեր, իմ հայ ժողովրդի համար, և պիտի աղոթենք Նարեկացու խորերով ասած. «Ի խորց սրբի խոսք ընդ Ասդրու»՝ անելով մեր աղոթքը, որպեսզի կարողանանք իրականացնել այն, ինչ ասում են մեր հայրերը. «Զայն բազմաց եղիցի ձայն Ասդրու»: Եվ հավատացեք. վաղը այսպես ձեր բոլորի դեմքերը պիտի լինեն փայլտակած Քրիստոսի լոյսով, ձեր հոգիները զրացած երա հույսի և հավաքրի զրությամբ, և Ասդրած պիտի դա այն, ինչի համար դուք այս պահին աղոթում եք, ինչի համար դուք այս պահին ձեր մոմերը վատեցիք և ձեր երեսները խաչակնքեցիք:

«Սէր ասդրուածային ընդ ձեզ այժմ և միշտ և յափուանս. ամէն»: